

ընդհանրապես *Թերձեմանը հաքըքաթ, Վաքըթ եւ Ճերիտէի հավատիս* լրագիրները:

–Երիտասարդութիւն չկա՛յ հոս:

–Չկայ: «Այս թաղին կլիման, կ'ըսէր մէկ բարեկամս, երիտասարդի մազերն շուտով կը ճերմկցունէ. բայց ճերմկցնելէն վերջն ալ դեռ շատ կապրեցունէ. ասոր համար երիտասարդք դեռ մազերնին չճերմկցուցած էթէ ուրիշ թաղ մը երթան, եւ ուրիշ թաղերու մէջ մազերնին ճերմկցուցած անձինք հոս գան՝ շատ լաւ եւ օգտակար կ'ըլլայ:

–Անհասկանալի թաղ մը:

–Մեծագոյն մասն առանց օղի խմելու չկրնար հանգիստ ընել. հոս ընդհանրապէս շատ կը ծխեն եւ քիչ կ'ուտեն:

–Քի՞չ ուտելու համար շատ կը ծխեն, թէ շատ ծխելնուն համար քիչ կ'ուտեն:

–Առաջինը հաւանական է. վասնզի կեսարացիներ կան հոս: Քիչ կ'ուտեն՝ բայց գեղեցիկ օդով կը սնանին: Թաղեցին ընդհանրապէս նիհար է: Թաղս ջերմեռանդ քիչ ըլլալուն պատճառաւ եկեղեցի շինուած չէ հոս՝ իբրեւ աւելորդ ծախք. թաղեցիներէն մէկ քանին երբեմն Սէլամսըզի եկեղեցին կ'երթան, երբեմն ալ Քուզկուճուք:

–Իգական սեռն ի՞նչպէս է:

–Կիները գեղեցիկ են, բարեձեւ, կրթութեան հակամէտ: Կիներն իրենց մայրենի լեզուն Սէլամսըզի կիներէն շատ աղէկ կ'իսօսին: Այս թաղի կիներուն տանտիկնութիւնը Իւսկիւտարի թաղերուն եւ ոչ մէկուն մէջ տեսնուած է: Երեսի ներկը միայն քիչ մը չափէն աւելի յառաջ երթալու վրայ է հոս. ծեր այրերն ալ երբեմն այս ներկէն կ'գործածեն: Նորածեւութեան մասին Գատրգեղցիներուն չափ յառաջ գնացած չեն: Հոս կիները գեղեցկաձայն են եւ միշտ տաճկական երգեր կերգեն, ինչպէս որ իրենց ամուսիններն ալ տաճկական *սէթրի* կ'հագնին: Թաղիս մէջ մեծ ֆէսը շատ յարգի է. երբեմն իրենց գլուխը կ'դնեն այնչափ մեծ *ֆէսեր*, որոնց իւրաքանչիւրին մէջ չորս օխա խաղող կ'դրուի:

Օդը խիստ է. քաջառողջներուն չդպչիր, վատառողջներն անդիի աշխարհ կ'դրկէ:

Հայերէ բնակուած տուներուն թիւը հինգ հարիւրի մօտենալու վրայ է, *իքի էիւզ* խաղացողներուն թիւն ալ վեց հարիւրի: